

ԶՐԻՉՈՒՐԵԼԻ ԳԻՂԵՐ

(Ա. 2 ե խ ո վ ի):

Ամբիօքեանը գունատուեցաւ, մի քիչ ցածացրեց լամպարը և սկսեց լուզուած ձայնով.

— Մուժ, զարհուրելի մուժ էր պատել աշխարհս. այնպէս, որ, մատդ որ ընկերովդ աչքը կոխէիր, չէր տեսնիր. ալդպիսի մի գիշեր էր, երբ 1883 թ. ծննդեան գիշերը վերադառնում էի իմ հանգուցեալ ընկերոջս մօտից, որտեղ ամենքս էլ երկար նստեցինք, տարուելով ոգեհարցութեան փորձերով. Այն նեղ փողոցները, որոնցով ես վերադառնում էի, ինչ որ պատճառով ալդ գիշերը չէին լուսաւորուած և ես ստիպուած էի խաբիսափելով առաջ գնալ. Ալդ ժամանակ ընսկում էի Մոսկուալում, գերեզմանոցների վերափոխման եկեղեցու մօտ, Դիակեանի տանը. ասել է, Արքատի ամենայեւ ընկած անկիւններից մէկում. Մինչդեռ ես քալում էի, ինձ պաշարել էին ամենամուալլ, ճնշող մտքեր...

«Եկեանքդ մօտենում է իւր արեմուտին... Զղջանք...

— Այս էր այն նախադասութիւնը, որ ոգեհարցութեան փորձերի ժամանակ ստացել էի Սպինոզայից, որի ոգին լաջողել էի կանչել այն աշխարհից. Ես խնդրեցի, որ ոգին կրկնէ, և ասիւն ոչ միայն կրկնեց, այլ և աւելացրեց՝ «այս գիշերս. Ես չեմ հաւատում ոգեհարցութեան. բայց մահուան զաղափարը, նոյն իսկ ամենաթեթեւ ակնարկ ալդ մասին, ինձ լուսահատութեան դուռն էր հասցնում. Մահն անխուսափելի է, պարտններ, նա սովորական երևութ է, բայց և այնպէս ալդ միտքը զարհուրելի էր մարդու համար... իսկ ալժմ, երբ սառը, անխափանցելի խաւարն ամեն կողմից շրջապատել, կուլ էր տուել ինձ և իմ աչքերի առաջ անձնի կաթիլները դիւալկան պար էին բռնել, իսկ գլխավերև լուսակտուր հեծում էր քամին, երբ չորս կողմս ոչ մի կենդանի էակ չէի տեսնում, մի անորոշ և անընցատրելի երկիւղ պատեց իմ հոգին. Պէտք է ձեռք ասեմ, որ ես նախապաշարումներից ազատ մարդ եմ, բայց այնպէս էի շտապում, որ վախենում էի նոյն իսկ լեռնային, կամ շուրջս դիտել, ինձ այնպէս էր թւում, թէ հէնց որ լեռ նայեմ, իսկույն մահը կտեսնեմ ուրախ կերպարանքով:

Ամբիժքեանը լախուռն շնչեց, մի քիչ ջուր խմեց և շարունակեց.

—Այդ անորոշ, բայց ձեզ համար հասկանալի է թէ ինչպիսի երկիւղ էր,—հա, այդ անորոշ երկիւղը պոկ չեկաւ ինձինք նոյն իսկ և այն ժամանակ, երբես բարձրացաւ Դիակիւանի տան չորրորդ լարկը, բաց արի դուռը և սենեակս մտաւ իմ համեստ բնակարանս բոլորովին մութ էր։ Վառարանում քամին լալիս սուղում էր և կարծես մի տաք անկիւն էր խընդրում, վառարանի դռնակը թեթեւակի զարնելով։

—Եթէ հաւատալու լինինք Սպինոզային,—ժպտացի ինքս ինձ,—ապա այս գիշեր այս քամու ողբաձայն օրօրի աղղեցութեան տակ պէտք է մեռնիմ։ Դուրեկան բան չէ, է մախլաս։

Նս վառեցի լուցկին... Կատաղի քամին սուրում էր կը տուրների վրայով։ Մեղմ ողբաձայնը կատաղի մռնչոցի փոխուեցաւ։ Ներքում, մի տեղ կիսախաբիսու կրկնափեղկի թխկոցի ձայնն էր լսում, իսկ իմ վառարանի դռնակը լալահառաչ օգնութիւն էր հայցում...։

«Անտանելի բան է ալսողսի գիշերն անպատասպար, անտուն-անտէրի վիճակը»,—մտածեցի ես։

Բայց ալգպիսի մտածմունքների նուիրուելու ժամանակ չէր։ Նրբ իմ լուցկու վրայ ծծումբը կապոյտ բոցի փոխուեցաւ և ես ալք անցրի սենեակս, մի բոլորովին անպատեղի և դարհուրելի բան տեսաւ... Որչափ ցա ում, ավստում եմ, որ քամու թափը մինչև իմ լուցկին չէր հասնում։ Այն ժամանակ, գտնեց, ոչինչ չէի տեսնիլ և մաղբոս բիղ-բիղ չէին կանգնիլ։ Նս սիրտ կտրատող ձայն արձակեցի, սի քալլ լետ գնացի դէպի դուռը և երկիւղից, լուսահատութիւնից, զարմանքից պաշարուած, աչքերս գոցեցի...։

Ուղիղ սենեակի մէջ տեղը դրուած էր մի դագաղ։

Կապոյտ բոցը երկար չտևեց, բայց ես կարողացաւ որոշել դագաղի գծերը... Նս նշմարեցի վարդագոյն, փալլեղացող դառերը, տեսաւ պալարակար, ոսկէ խաչը խուփի վրայ... բռնեի կան, պարոններ, որոնք դրոշմում են ձեր մտքում, չնայելով, որ դուք միայն մի մաներկորդ նշմարեցիք։ Այդպէս էր և ալք դագաղը։ Նս միայն մի վալրկեան տեսաւ, բայց մտաբերում եմ ամենայն մանրամասնութեամբ։ Դա միջահասակ մարդու դագաղ էր և, դատելով վարդ-գոյն կոտրից, ծաղկաթիթիթ աղջկալ համար։ Թանկագին զառը, ոտները բրոնզէ կոթերը,—ամեն ինչ սառւած էր, որ հանգուցեալը հաւուստ դասակարգի էր պատկանում։

Դիւսպատտու դուրս թալ սենեակիցս և առանց դատելու, մտածելու, ալլ միայն անկարագրելի երկիւղ զգալով, սանդուղներից վալր էի սլանում։ Սրահում և սանդուղների վրայ խաւար էր, ոտներս մուշտակիս փեշերին էին փաթաթւում և ես մինչև ալսօր էլ զարմանքով եմ լիշում, թէ ինչպէս էր, որ չկորուեցաւ և վիզս չկոտրեցի։ Ինքս ինձ փողո-

ցում գտնելով և թիկն տալով լապտերի թաց սիւնին, սկսեցի հանգստացնել ինձ։ Սիրտս, կարծէք, պիտի պատռուէր, աչնպէս էր արոխում, շունչս կտրուում էր...

Ունկընդիրուհիներից մէկը մի փոքր աւելացրեց ճրագի լուսը, մօտեցաւ պատմողին, և վերջինս շարունակեց.

— Ես չէի զարմանալ, եթէ սննեակուսմ հրդեհի, գողի, կատաղած շան հանդիպէի... չէի զարմանալ, եթէ առաստաղը վրու գար, լատակը խոր-գնար, պատերը շուռ գալին... Այդ ամենը և բնական և հասկանալի է։ Բայց ինչ գործ ունէր իմ սննեակուսմ դազաղը, որտեղից էր ընկել աչնտեղ։ Որտեղից՝ որտեղ։ Թանկագին, կանացի, անշուշտ, մի մատաղահաս ազնուհու համար լատկապէս պատրաստած, և ինչպէս կարող էր լանկարծ մի խեղճ, մանրաստիճան ծառալողի սննեակ ընկնել։ Դատարկ էր, թէ մէջը ննջեցեալ կար։ Ո՛ր է, արդեօք, նա, ալդ վաղաժամ կեանքից հրաժեշտ տուած հարուստ ազնւրուհին, որ ալդպիսի օտարոտի և զարհուրելի այցելութեամբ է պատուում ինձ։ Սպանիչ զաղտնիք։

«Եթէ սա մի հրաշք չէ, ապա եղեւնագործութիւն է», — կայծակի արագութեամբ անցաւ մտքովս։

Ես ինձ կորցրել էի կռահանքների ձեռքից, իմ բացառական ժամանակ դուռս կողպած էր և աչն տեղը, ուր թաղցրած է բանալին, միայն իմ ամենամտերիմ մարդիկը գիտեն։ Բայց հօ բարեկամներս չբերեցին դազաղը սննեակուսմ դրեցին... կարելի է ենթադրել նոյնպէս, որ դազաղ չինդեներն էին բերել սխալմամբ ինձ մօտ։ Նոքա կարող էին չփութած լինել լարկր մոռացած լինել կամ տունը սխալուել և դադաղն աչնտեղ չտանել, ուր աէտք էր։ Բայց ով չգիտէ, որ մեր դազաղագործները ոտքները սննեակից դուրս չեն դնի։ Նախ քան ստանալիք վարձը չառնեն կամ առ նուաղը օղերդին չպոկեն։

«Ոգիները մահ են դուշակել ինձ համար. — մտածեցի ես Չլինի հէնց նոքա են դազաղի հոգսն էլ քաշել»։

Ես, առնասարակ, ոգեհարցութեան շատ էլ հաւատացողներից չեմ եղել և չեմ էլ հաւատում։ Բայց այսպիսի զուգադիպութիւնը կարող է նոյն իսկ փիլիսոփային բնադանցական տրամադրութիւն ներշնչել։

— Բայց այս բոլորը լոկ միայն լիմարութիւն է և երեսալի չափ վարկոտ եմ, — վճռեցի ինքս ինձ. — Տեսողութեան խաբուսիկ երևութ էր. — ուրիշ ոչինչ։ Տուն գնալու ժամանակ ես աչն աստիճան մօտը տրամադրութեան մէջ էի, որ մի առանձին զարմանալու բան էլ չէր լինի, եթէ իմ հիւանդ ջղերս դազաղ էլ տեսնէին... ի հարկէ տեսողութեան խաբս է։ Ուրիշ ինչ կարող է լինել։

Անձրեն ուղղակի երեսիս էր զարկում, իսկ քամին զալութով խաղում էր վեշերիս, գլխարկիս հետ... Ես զողում էի

և սաստիկ թրջուել էի: Պէտք էր տեղից շարժուել, երթալ, բալց... Բարձր ճուռն դառնալիս, — կնշանակէր դադաղը նորից տեսնելու վտանգին ենթարկուիլ, իսկ ալդ՝ իմ ուժերիցս շատ բարձր էր: Ես, երբ մօտս մի խօսուէն, շարժուէն էակ չլինէր, ոչ մի մարդկային ձայն եթէ չլսէի, մեն-մենակ դադաղի հետ մնալով, որի մէջ, գուցէ, անկենդան դիակ էր դտնուում, — կարող էի խելալեղ լինել, ցնորուիլ, իսկ դուրսը՝ վարար անձ. բէի տակ մնալ և ցուրտ ուտել՝ անկարելի էր:

Վճռեցի գնալ գիշերել իմ բարեկամ Հանդստեանի մօտ, որ ինչպէս գիտէք, վերջը սպանեց իրեն: Նա ապրում էր կահաւորած սենեակներում: Մեռած փողոցում՝ վաճառական Կանգնանի մօտ:

Ամբիժքեանը սրբեց դալուկ դէմքի վրայ դուրս տուած սառը քրտինքը և, ծանր հառաչելով, շարունակեց.

— Բարեկամիս տանը չգտալ, Դուռը ծեծելով և համողութեամբ, որ նա տանը չէ, ես շոշափելով թագստարանում գտալ բանալիքը, դուռը բաց արի և ներս մտալ: Թաց մուշտակս հանեցի, դէն ձգեցի և, մթութեան մէջ խորխորելով զահաւորակը գտնելով, նստեցի հանգստանալու: Մութ էր... Լուսամուտի օդանցքում քամին թախծալից սուլում էր: Ծղրիտը վառարանում իւր միապաղաղ երգն էր երգում: Կրեմլում Ծննդեան առաւօտեան — ժամի զանգերն էին խփում: Շտապեցի լուցկի վառել: Բալց լուր չվանեց իմ մօտը թախիժը. ընդհակառակն, զարհուրելի, անպատմելի սարսափը նորից տիրեց ինձ... Ես գուռեցի, լետ-լետ գնացի և, ալ ևս ոչինչ չգտալով, դուրս փախալ համարից...

Ընկերոջս սենեակում ես նույնը տեսալ, ինչ որ իմ սենեակում, — դադաղ:

Նորա սենեակի դադաղը, համարեա, երկու անգամ աւելի մեծ էր, քան իմ սենեակինը և կինամոնազոյն պատտառը մի ինչ որ աւելի մօտը տեսք էր շնորհում նորան. Բնչպէս է ընկել ալստեղ ալդ դադաղը: Թէ ալս անգամ տեսողութեան խաբուսիկ երևոյթ էր, — ալ ևս կասկածել չէր կարելի... Խօսքէր կարող իւրաքանչիւր սենեակում դադաղ լինել: Պարզ էր, որ իմ հիւանդ ջղերի արդիւնքն էր. պատրանք էր: Այժմ ուր էլ գնալի, ամեն տեղ պէտք է մահուան սոսկալի բնակարանը տեսնէի: Կնշանակէր, որ ես խելքս թուցրել էի, խելաղար էի. «դադաղատեսութեան» ցաւով էի բռնուել, անշուշտ. և խելաղարութեանս պատճառը գտնելն էլ դժուար չէր, — բաւական էր լինել ոգեհարցութեան փորձը և Սպինոզայի խօսքերը...

«Ես խելաղարում եմ» — մտածեցի ևս զարհուրած, գլուխըս մեռքերիս մէջ առնելով: — Աստուած իմ. Բնչ անեմ:

Գլուխս տրաքում էր, ծնկներս ծալում էին... Անձրեն ալնպէս էր գալիս, որ կասէք աղբիւր է վազում. քամին

մինչև մարդու ոսկրների ծուծն էր թափանցում, իսկ ես ոչ մուշտակ, ոչ էլ զլխարկ ունէի։ Յետ դառնալ, որպէս զի համարիցս վերցնէի թէ մէկը և թէ միւր՝ անկարելի էր. իմ ուժերիցս շատ ու շատ բարձր էր... Երկիրն ինձ կաշկանդել էր իւր ճրարանների մէջ Մաղերս բիզ-բիզ էին կանգնած, երեսիցս սառը քրտինք էր շռուում, թէև ես դարձեալ հաւատում էի, որ դա պատրանք է...

—Ի՞նչ պիտի անէի—չարունակեց Ամբիծքեանը։—Ես խելագարում էի և սաստիկ մրսելու վտանգի մէջ էի։ Բարեբաղդաբար մտաբերեցի, որ Մեռած փողոցից ոչ-շատ հեռու ապրում է իմ մի լաւ ծանօթս, նոր աւարտած մի բժիշկ, Շիրիմեանը, որ հէնց այդ գիշեր ինձ հետ միասին ներկայ էր ողեհարցութեան փորձերին։ Ես շտապեցի նորա մօտ... Այն ժամանակ նա դեռ ևս պսակուած չէր հարուստ առևտրականի աղջկայ հետ և ապրում էր պետական խորհրդական Լանգըստարանեանի տանը՝ հինգերորդ լարկում։

Շիրիմեանի մօտ, անագորոշ բաղնի երեօթից, իմ ջղերս մի նոր զարհուրելի փորձի պիտի ենթարկուէին։ Բարձրանալով հինգերորդ լարկը, ես մի զարհուրելի աղմուկ, աղաղակ լսեցի։ Վերևը մէկը դէս ու դէն էր վազվզում, ոտները դետնին խփելով և զաները չրխկացնելով։

—Օգնութիւն,—լսեցի մի սիրտ կտրատող ձայն։ Օգնութիւն, հասէք... Դռնապան։

Եւ մի ըոպէից լետու ոտներս լսեցի վերից վար էր սլանում, ուղիղ դէպի ինձ, մի մութ ստուեր, փաթաթուած մուշտակի մէջ և ճմրթուած գլխարկով...

—Շիրիմեան,—բացականչեցի, ճանաչելով բարեկամիս։ Դձուք էք։ Ի՞նչ է պատահել, թնչ խաբար է...

Ինձ մօտ հասնելով, Շիրիմեանը կանգ առաւ և ջղաձգաբար բռնեց ձեռքս։ Նա դժգոյն էր, ծանր շունչ էր քաշում, դողում էր ամբողջ մարմնով։ Աչքերն աննպատակ և անկանոն ալս ու ալն կողմն էր լածում, կուրծքը ելնում-իջնում էր...

—Դձուք էք, Ամբիծքեան,—նարցրեց նա խուլ ձայնով։ Դձուք էք, արդեօք, Դուք դժգոյն էք, սպրտնած, կարծէք գերեզմանից նոր էք դուրս եկել... Բայց չէ՝ պատրանք չէք դուք... Աստուած իմ... դուք զարհուրելի էք...

—Բայց թնչ է պատահել ձեզ։ Ձեզ վրայ մարդու կերպարանք չէ մնացել։

—Օ՛խ, թողէք, սիրելիս, մի շունչ քաշեմ... Ես ուրախ եմ, որ ձեզ հանդիպեցի, եթէ լիրաւի դուք էք, և ոչ թէ տեսողութեան խաբուսիկ երևոյթ։ Անիծեալ ողեհարցուկ... Այնպէս է քրքրել ջղերս, որ, երևակայեցէք, երբ սենեակս մըտալ, ախտեղ՝ սենեակում տեսալ... դազանդ։

Ականջներիս չէի հաւատում և խնդրեցի նորից կրկնել։

—Դադանդ, իսկական դադադ,—ասաց բժիշկը, ուժամասկառնեալով սանդուխքի աստիճանի վրայ:— Ես վախկոտ չեմ, բայց ակն ինքը սատանան կըռռայ, եթէ ոգեհարցութեան փորձերից տուն դառնալիս խաւարի մէջ դադադի հանդիպի. Շփոթելով և կակաղելով ես բժշկին պատմեցի ակն դադադների մասին, որ տեսել էի...

Մի րոպէ մենք իրար երես էինք նստում, աչքերս պըշած և բերաններս զարմանքից բաց. իսկ լետու, որպէս զի համոզուենք, որ մենք չենք դառանցում, մենք սկսեցինք իրար ճակիթել:

—Երկուսս էլ ցաւ ենք զղում,—ասաց բժիշկը,—կնշանակէ, այժմ մենք քնէած չենք և իրար տեսնում ենք ոչ երաղում. կնշանակէ, ակն դադադները, որ տեսանք թէ ես և թէ դուք,—տեսողութեան պատրանք չէ, այլ մի իրական բան է, այժմ ինչ անենք, եղբայր:

Մի ամբողջ ժամ կանգնած մնալով սառը սանդուղների վրայ և կռահանքների մատնուած, ենթադրութիւններով մէջ կորած, մենք սարսափելի դողոցի մէջ ընկած, վճռեցինք զէն ձգել փոքրոգի երկիւղը և, դարձեցնելով պահապանին, առնել նորան ևս, գնալ բժշկի սեննակը: Այդպէս էլ արինք: Սեննակ մտնելով մոմ վառեցինք և լիբաւի տեսանք սպիտակ դառերով, ռսկէ ծոպերով և փնջերով զարդարուած մի դադադ: Ծառան երկիւղածութեամբ երեսը խաչ հանեց:

—Այժմ կարելի է իմանալ,—ասաց դժգոյն և ամբողջ մարմնով դողացող բժիշկը,—դադադը դատարկ է, թէ... մէջը մարդ կա:

Երկար, ամենքիս համար հասկանալի անվստահութիւնից լետով բժիշկը թեքուեց և, ատամները երկիւղից ու անորոշ ակնկալութիւնից պինդ սեղմած, պրկեց դադադի խուփը: Մենք նախեցինք դադադի մէջ և...

Եւ դադադը դատարկ էր...

Մէջը ննջեցեալ չկար, բայց դորա փոխարէն մէջը հետեւեալ բովանդակութեամբ սի նամակ գտանք.

«Սիրելի Շիրիման: Դու շատ լաւ գիտես, որ իմ անբողջ գործերը շատ վատ դրութեան մէջ են: Նա մինչև բուկը պարտքի մէջ է խրուած: Վաղը կամ մըս օր պիտի գան նորա գութը վեր-գրելու, և այդ բանը պիտի դժբաղդացնէ թէ նորա և թէ իմ ընտանիքը, պիտի ցեխի հետ հաւասարեցնէ մեր պատիւը, մի բան՝ որ ամենից աւելի թանգ է ինձ համար: Երեկուալ ընտանեկան խորհրդի ժամանակ մենք վճռեցինք թաղցնել արժեքաւոր և փոքր ի շատէ գին ունեցող իրեղէնները: Որովհետև աներոջս բոլոր կալքը և գութը միայն դադադներն են (նա, ինչպէս գիտես, մեր քաղաքի ամենալաւ տնի դադադագործն է), ուստի և վճռեցինք թաղցնել ամենալաւ դադադները: Դիմում եմ քեզ, իբրև ազնիւ բարեկամի, օգ-

նիր ինձ, աղատիր մեր գուքն ու պատիւը: Այն լուսով թէ
դու կօգնես մեզ պահպանելու մեր գուքը, ուղարկում եմ քեզ,
սիրելիս, մի դադաղ, որ կլննդրեմ թագցնել քեզ մօտ և պա-
հել մինչև լետ պահանջելու: Առանց ծանօթների ու բարեկամ-
ների օգնութեան մենք կորած ենք: Յուս ունիմ, որ դու չես
մերժիլ ինձ, մանաւանդ, որ դադաղը մօտդ մի շաբթից աւելի
չի մնալ: Ամենքին, որոնց ես մեր սրտացաւ բարեկամն եմ հա-
մարում, ուղարկել եմ մի-մի դադաղ և կատարելապէս վստահ
եմ նոցա ազնուութեան և մեծահոգութեան վրա: Քեզ սիրող
Ծնոտեան:

Այս դէպքից լետով երեք ամիս շարունակ ես բժշկւում
էի Ղլալին խանգարումից, իսկ մեր բարեկամը՝ դադաղ շինո-
ղի փեսան ազատեց թէ իւր պատիւը, թէ կալքը և ալժմ ար-
դէն ունի «թաղման գրասենեակ», վաճառելով միևնույն ժամա-
նակ և գերեզմանաքարեր և արձաններ: Նորա գործերն ալժմ
էլ չառ լաւ չեն և ես, ամեն երեկոյ տուն դառնալով, վախե-
նում եմ թէ չլինի մահճակալիս մօտ սպիտակ մարմորիոնէ
լուշարձան կամ գերեզման տեսնել:

Յ. Ա.

